« բայց մովսիական օրէնքն՝ հրաման չտայ
« ուտել. յետոյ, Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝
« Հրէայքն նախանձու՝ խողոտ սրկաւառակէն
« լեղի և քացախ արբուցին ի վերայ խաչին,
« վասն այն զի հեթանոսքն խող ուտէին և
« Հրէայքն բաժանէին ի նոցա կերակրոցն.
« վասն այն առաքեալքն օրհնեցին և մեզ
« հրամայեցին ուտել, որ բաժանին Հրէայքն
« ի մեզանէ »։

Վերջին ի չորքոտանեաց յԱբրահամէ ստո-
բաբերեալց է Աքիս, զոր նա գ տարիս զրէ
միշտ. « Ագիս, Արապի՝ Իսմիարս, Թուրքերէն՝
« Կէչիմձիք. Մկան հակառակ է. թէ որսայ՝
« զարիւնն ծրծէ, և զմիսն չի ուտէ. բնութիւն՝
« ժողովող է. թէ ոսկի կամ արծաթ գտանէ,
« գողանայ, երթայ իւրեն խաղինա (գանձ)
« շինէ. թէ զարկնիս կամ նեղանայ ի քէնէ,
« ոխ կու պահէ, գայ և զհալաւդ կարատէ.
« և թէ հնար գտանէ՝ ոտքդ և այլ անդամքդ
« կու խածատէ. և թէ հարկիք արիր, եր-
« թայ ոսկի կամ սպիտակ (արծաթ զրամ)
« գտանէ՝ գողանայ, և մի մի քեզ մօտ բերէ.
« թէ յառաջմէ գտեր էր և խազինա էր շի-
« ներ իւրեն, անտի կու կրէ և քեզ բերէ։
« Ամ՞թ անմտաց Եկիպտացոցն, որ ի ժա-
« մանակս Փարաւոնի՝ կուզս և աքիս չաս-
« տուած պաշտէին, պատճառն այն էր, որ
« մուկն շատ էր այն աշխարհն, և չի կա-
« րէին հանդիստ հաց ուտել. երթեալ ագիս
« և կուզս բերէին և ի բաց թողուին, որ
« երթեալ ածեն և զմուկսն որսասցին և
« սատակեսցեն. վասն այն ի կերպարանս
« (նոցա) կուռք էին շինել և պաշտէին »։ —
Աքիսին օգտին համար գրէ ի լուսանցս
գրոցն. « Թէ աքիսին միսն՝ ցաւած ակռային
« վրայ դնեն, ակռան ելանէ »։

Ի բաժնի չորքոտանեաց մոռնալով յիշել՝
ի վերջ թռչնոց ստորագրութեան աւելցուցեր
է Աբրահամ և զՄիեղջերու, զոր ինքն զրէ
« Միեղջուր. Թուրքերէն Քէրքէրտան. հզօր
« և յուժով չորքոտանի է, որ զֆիլն ի գլուխն
« կու վերցնէ. ֆիլն կու մեռնի, և չի կարէր
« ի գլխուն (վայր ընկնիլ), և այնպէս կու
« հոտի, և սկսանի եղն ֆիլին՝ ի աչքն իշա-
« նել միեղջիւրին, և այնպէս կուրանայ, նայ
« այլ այնպէս մեռանի։ Եւ կայ միեղջիւր
« մի այլ՝ որ փոքրիկ է. և կայ աշխարհ մի՝
« որ դուն է ջուրն, և չի կարեն կենդանիքն
« խմել. ժողովին յեզր ջրոյն և հայեն,
« մինչեւ գայ միեղջիւրն և զեղջիւրն առաջ
« ձգէ ի ջուրն, և ինքն խմէ առաջ, և ապա
« այլ կենդանիքն թափին ի ջուրն և խմեն.
« զի հրամանաւն Աստուծոյ քաղցրանայ
« ջուրն »։

Գ. Երկրորդ բաժին կենդանեաց, այսինքն
թռչնոց է. և միայն ասոնց համար, յառաջա-
բան մի գրած է Աբրահամ, այսպէս. « Սկիզբն
արասցուք ի յօդային թռչնոց և հաւուց, ըղ-
բնութիւն և զգնացս նոցա, և զթռչիլն նոցա,
զօգուտն և զենն, և այլ որպիսութիւն նոցա,
կամ զկերպարանքն նոցա։ Այն որ վիզն
երկայն է՝ ոտքին այլ երկայն է, յուժով
կու թռչին։ Եւ թռչուն որ ոտքին կարճ
լինի՝ յուժով չի կարեր թռչիլ. որպէս
մարդս՝ թէ ձեռքն չի լինէր՝ չէր կարեր
վազել։ Թռչուն կայ որ կերպարանքն ազնիւ
է տեսութեամբ, որպէս զհան Սիրամարգ,
և որպէս զՊեզպեղ՝ որ Ցուտի ասեն (թութակ)։
Թռչուն կայ որ ձայնն անուշ է, որպէս
զՊլպուլ և որպէս զՑատրակ կամ զՍեւ հաւ.
կամ բարձրաթռիչ, որպէս զԼեռան հաւուին՝
որ Պայիր դուշի ասեն. և այլ ցեղ մի կայ
որ Պոզմաքլի պաքալ ասեն. և այլ ցեղ
մանր թռչունք՝ որ անուշ ձայն ունին. որպէս,
Սագա և որպէս Խսպինոս, և որպէս զՖի-
լորեայ, կամ որպէս Խաքէթի և որպէս Սը-
ղրոնքրքն. և այլ բազում անուշաձայն հաւք,
զոր թիւն արարիչն նոցա միայն գիտէ։

Եւ են այլ ազգ հաւքն (որ) գէշակերք են.
որպէս զՍեւ Ագռաւն և Ճայէկն և Վարիճ-
նակն և Բազան և Շահինն և Պալապանն,
և Սեւ հաւն՝ զոր Ցաշանճիլ ասեն, և այլ
սոյնպիսիքն, զոր թիւն նոցա արարիչն միայն
գիտէ։ Եւ այլ թռչունք կան որ ի տունս կու
պահեն և շուտով ընդելանան հետ մարդոյն.
որպէս Խոսողն, որ է Ալիս? (Աքաղաղ), զոր
Խորոզ ասեն. և Հաւն՝ որ է էգն. և որպէս
Աղաւնին և Բազն և Սագն, և այլ սոյն պի-
սիքն, զոր թիւն նոցա արարիչն միայն գիտէ։
— Հաւ կայ որ միս կու կերցընեն, և հաւ
կայ որ զմիսն կ'ուտեն։ Նոյնպէս և ազգս
մարդկան, մարդ կայ՝ որ հարկ անես և